«Մենք շատ ենք ցանկանում Իրանից ուսանողներ ունենալ, թէ՛ հայ, եւ թէ՛ ոչ-հայ»

Հարցազրոյց՝ Հայաստանի Ամերիկեան համալսարանի նախագահ պրոֆեսոր Արմէն Տէր-Կիւրեղեանի հետ

- Որպէս առաջին հարց, կը ցանկանայի, ամփոփ կերպով ծանօթացնէք Ձեզ մեր ընթերցողներին եւ պատմէք Ձեր կենսագրութիւնը:

- Շատ լաւ: Մենք եմ Նոր Ջուղա՝ Մ.Պ.Հան: Հայրս յայտնի նկարիչ Մմբատ Տէր-Կիւրեղեանն է: Մինչեւ 11-րդ դասարան յաճախել եմ Նոր Ջուղայի հայկական դպրոցը, իսկ 12-րդ դասարանն աւարտել եմ Մ.պ.Հանի «Հաքիմ Մանսուի» պետ. դպրոցում: Ապա յաճախել եմ Թեհրանի Պետ. Համալսարանը եւ ուսանել քաղաքացիական կառոյցների ճարտարագիտութիւնն (Civil Engineering) բաժնում, որտեղ առաջել եմ գերլիազանահ (մագիստրոսի) կոչում: Ապա հետեւ., եւ, 1972 թ.-ից Իլինոյս Նահանգի «Իլինոյս Ուրբանա-Շեմպէյն» համալսարանում ուսանելով 1975 թ.-ին առաջել եմ կառոյցների ճարտարագիտութեան դոկտորական գիտական աստիճան՝ չէնթքերի ախտամեխանիկայի եւ յուսալիութեան նեղ մասնագիտութեամբ: Ապա դասախօսի պաշտօն եմ առաջել Հարաւային Կալիֆորնիայի համալսարանում (USC) եւ փոխադրուել պետեղ պաշտօնավարելու:

1978 թ. բահան ունեցայ պրոֆեսորի պաշտօն առանալու Կալիֆորնիայի «Բերկլիի» համալսարանում, որն աշխարհի լաւագոյն համալսարաններից է իմ մասնագիտութեան գծով: Բաւական պաշտօններ եմ վարել պետեղ եւ եղել եմ նաեւ կառոյցների ճարտարագիտութեան ճիւղի ամբոնի վարիչ (Taisei Chair in Civil Engineering):

- Ինչպէ՞ս առաջացաւ Հայաստանում ամերիկեան համալսարան հիմնադրելու գաղափարը:

- 1988 թ. Հայաստանի երկրաչարժից անմիջապէս յետոյ, Ամերիկայի Գիտութիւնների ակադեմիան Հայաստան ուղարկեց 22 անդամից բաղկացած մի պատերազմական (սէյսմոլոգ) ճարտարագէտներից եւ, այլ մասնագէտներից՝ տեղում ուսումնասիրութիւններ կատարելու եւ գիտական պետկութիւն ցուցաբերելու նպատակով: Այդ 22 հոգու թւում 2 հոգի կային՝ դոկտ. Մ.Իբրան Ազբաբեանը, ով այդ ժամանակ Հարաւային Կալիֆորնիայի համալսարանի (USC) չինարարութեան ֆակուլտետն էր դեկավարում, միւսն էլ՝ ես: Հայաստան եկանք երկրաչարժից մօտ 10 օր յետոյ, ուսումնասիրեցինք, վերադարձանք եւ մի չարք դասախօսութիւններ ունեցինք այդ թեմայով: Յետոյ՝ 1989 թ. փետրուարին նորից եկայ Հայաստան, որպէս Խորհրդային Միութեան հետ՝ մասնակցելու մի դիտաժողովի, որին ներկայ էին բազմաթիւ երկրների ներկայացուցիչներ, ես էլ ԱՄՆ-ի ներկայացուցիչն էի: Այդ այցելութեան ժամանակ մի խօսակցութեան ընթացքում Հայաստանում ամերիկեան համալսարան հիմնելու գաղափարը ծագեց, կամ աւելի ճիշտ՝ ամերիկեան մտածելակերպով բարձրացրուն կրթութեան գաղափարն առաջ քաշուեց: Այդ գաղափարը գործադրելու նպատակ: Մ.Իբրան Ազբաբեանի հետ համատեղ մի նախագիծ առաջարկեցինք ամերիկեան եւ հայկական չորս հիմնարկների, այդ թւում՝ Հայբարեգործական ընդհանուր միութեանը (ՀԲԸՄ), որն այդ ժամանակ նախագահում էր տկն. Լուիզ Մանուկեան-Միմոնը:

Նա մեզ պատասխանեց, որ իրենք գտնում են, որ Հայաստանում ամերիկեան ոճով համալսարան հիմնելը չատ լաւ գաղափար է եւ պատրաստակամութիւն յայտնեց հովանաւորել աշխատանքները:

Ամփոփ կերպով ասեմ, որ դրանից յետոյ կալիֆորնիայի համալսարանի նախագահին՝ Դէյվիդ Գարդներին առաջարկ ներկայացրեցինք եւ խրեց-բեցինք, որ այնկոնն մեզ համալսարան հիմնելու գործում: 1990 թ.-ին կալիֆորնիայի համալսարանից մի պատերազմական հետ Հայաստան, տեղում ուսումնասիրելու նման մի համալսարան հիմնելու կարելիութիւնները ու յարմարութիւնները: Արդիւնքում 1991 թ.-ին հաստատուեց դա, եւ համալսարանը հիմնուեց նոյն թւականին: Հիմնադիրներից մէկը ես էի եւ դա իմ կենսագրութեան մի կարեւոր մասն է կազմում:

Պէտք է ասեմ 3-րդ մի հիմնադիր էլ կար՝ Մոսկուայի կարամարգեանը, որը յետոյ միացաւ մեզ: ՀԲԸՄ-ի ժամանակի նախագահ Լուիզ Մանուկեան-Միմոնը ես չատ կարեւոր դերակատարութիւն ունեցաւ եւ այդ առումով նա էլ հիմնադիր է համարւում:

Ես դեռեւս «Բերկլիի» համալսարանում պաշտօնավարում էի որպէս ճարտարագիտական դեպարտամենտի (ամբոնի, ֆակուլտետ) անօրէն եւ դրան զուգահեռ սկսեցի դեկավարել Երեւանի Ամերիկեան համալսարանի ճարտարագիտական բաժինը մինչեւ 2007 թ., որից յետոյ հրաժարուեցի:

- Չէի՞ը հասցնում:

- Ալեւս չէր լինում: Ես գալիս-գնում էի կամ էլեկտրոնային նամակներով էի հետեւում աշխատանքներին, բայց ուելին էր հարկաւոր: Ալեւս անհրաժեշտ էր այդ պաշտօնը վարէր մի տեղացի, ով մշտապէս Երեւանում լինէր: Ուստի դժուար Հաջեանը տասնհինգ պաշտօնը: Իսկ յետոյ, 2011 թ. նկայ Երեւան, լուծելու այստեղ ծագած մի չարք խնդիրներ: Այդ ժամանակ տասնհինգի ուսումնական հարցերի գծով փոխնախագահի (Provost) պարտականութիւնը եւ պաշտօնավարեցի 2011-2012 թթ.: Կրկին «Բերկլիի» համալսարանում ունեցած պաշտօնից զուգահեռ: Ցնծ ատոյ՝ 2014 թ. համալսարանի նախկին նախագահ՝ դոկտ. Բրուս Գօդոսեանը հրաւիրուեց եւ հոգաբարձութեան նիւթ առաջարկեց համալսարանի նախագահի պաշտօնը, որը տասհնգեցի 2014 թ. յուլիսին: 2015 թ. յուլիսին էլ «Բերկլիի» համալսարանից հեռացան կոչուեցի:

-Քանի որ այս տարի Հայաստանի Հանրապետութեան 25-ամեակին զուգահեռ նշելու է նաեւ Հայաստանի Ամերիկեան համալսարանի հիմնադրման 25-ամեակը, կարելի՞ է նաեւ Հայաստանի Ամերիկեան համալսարանի հիմնադրման 25-ամեակին զուգահեռ նշելու է նաեւ Հայաստանի Ամերիկեան համալսարանի հիմնադրման 25-ամեակը, որ կատարուել է 1991 թ.-ին Հայաստանի Հանրապետութեան անկախութեան տարեդարձի օրը, որպէսզի ներկայացուցիչներ ունենայ Հայաստանի Ամերիկեան համալսարանի հիմնադրման 25-ամեակին:

- Շատ յաջող ընտրութիւն է: Ես ինքս ներկայ էի այդ հանդիսութեան, որ տեղի ունեցաւ Հանրապետութեան հրապարակում: Ինչպէ՞ս կը գնահատէք Ձեր կատարած աշխատանքը:

- Ես կարծում եմ, որ մենք մեծ յաջողութիւններ ենք գրանցել: Ամերիկեան համալսարանի հիմնադրման գաղափարը ծագեց, երբ Հայաստանում ամերիկեան համալսարան հիմնելու գաղափարը նորաձեւ էր եւ շատ մարդիկ կասկածանքով էին նայում այդ գաղափարին: Ինչպէս ասացի, ես ինքս էլ կասկածանքով էի նայում այդ գաղափարին, որովհետեւ ես գիտէի, որ Հայաստանում ամերիկեան համալսարան հիմնելը շատ դժուար է լինելու:

«Մենք...»
(Շար. 5-րդ էջից)

անգլերէն լեզուի ուսուցիչներ: Մրանցից բացի, հետաքրքրական կենտրոններ ունենք, օրինակ՝ «Ծակոթեանի անուան բնապահպանութեան ուսումնասիրութիւնների կենտրոնը», որը չունեի դիպլոմ, բայց բոլոր ուսանողներն առարկաներ են լրացնում այդ կենտրոնում:

- Իսկ Ձեր հանապատյան ընդունելու համար ի՞նչ ուսեալներ են ահիրաժեշտ:

- Առաջինն այն, որ մեր բոլոր դասընթացները անգլերէն լեզուով են, որին պէտք է ուսանողը տիրապետի:

Բակալաւրատի (BA) բաժնում ուսանողները պէտք է պարտադիր կերպով անցնեն 2 առարկայ՝ «Հայ գրականութիւն» եւ «Հայոց պատմութիւն»: Այդ առարկաները հայերէն լեզուով են ուսուցանւում: Օտարազգի կամ հայերէնից թոյլ ուսանողների համար այդ առարկաները առանձին բաժնում ուսուցանւում են անգլերէն լեզուով: Դիմորդը պէտք է անգլերէնի «TOEFL» թեստի բաւարար դնահատական ունենայ: Իսկ Բակալաւրի համար դիմող ուսանողը պէտք է յանձնի «S.A.T. Math.», կամ AUA eMath քննութիւններից գոնէ մէկը: Հետեւաբար դիմորդը պէտք է բաւարար չափով մաթեմատիկական իմացութիւն էլ ունենայ: Օրինակ՝ «Համակարգչային/հաշուողական գիտութիւնն» (Computational Science) ճիւղը պահանջում է մաթեմատիկական բարձր գիտելիքներ: «Բիզնես» ճիւղը մաթեմատիկական համեմատաբար աւելի ցածր գիտելիք է պահանջում: Իսկ Անգլերէն լեզուի եւ հաղորդակցութիւն» (English language and Communication) ճիւղի համար՝ չաս աւելի քիչ: Բակալաւրի համար պայման է նաեւ աւագ դպրոցի (High School) դնահատականները, եւ անհատական յօդուած՝ համալսարան դիմելու նպատակի մասին (Personal statement): Մագիստրատական օղակ դիմելու դէպքում դիմորդը պէտք է եւս յանձնի «TOEFL»-ի քննութիւն եւ մի ուրիշ քննութիւն մաթեմատիկայից, ըստ ընտրած ճիւղի: Նոյնպէս պայման է մագիստրատուրայի օղակի դիմորդի համար «BA»-ի աւարտական դնահատականները:

- Իմ ունեցած տեղեկութիւնների համաձայն՝ Ձեր բակալաւրի (լիսանսի օղակի) ծրագիրը համեմատաբար նոր է:

- Այո, երեք տարի առաջ է սկսել: Այժմ չորրորդ տարին է եւ 2017-ի յունիսին ունենալու ենք այդ օղակի առաջին շրջանաւարտները:

- Այդպիսով շարունակում էք սփիւռքահայ ուսանողների ներգրաւումը Ձեր ուսումնական գործընթացում: Ճի՞շտ եմ ընորոշում:

- Ոչ միայն սփիւռքահայ: Ցանկանում ենք ունենալ արտասահմանից հայ եւ ոչ-հայ ուսանողներ, մշակութային բազմազանութիւնը հարստացնում է ուսումնական միջավայրը:

Հայաստանը փոքր երկիր է եւ չատ միաւորւր (Homogeneous): Երբ արտասահմանից ուսանողներ են գալիս մեզ մօտ, հարստացնում են միջավայրը:

Իրանից բազմաթիւ իրանահայ ուսանողներ ենք ունեցել: Ունեցել ենք նաեւ իրանցի ուսանողներ, ովքեր յաճախ չատ լաւ են եղել ուսման մէջ:

Շատ եմ ցանկանում աւելի չատ Իրանից հայ եւ պարսիկ ուսանողներ ունենալ: Ունենք հնդիկ ուսանողներ: Այս տարի հատանաւոր առաջին չինացի ուսանողն է գալու: Ունեցել ենք ամերիկացի եւ ռուս ուսանողներ: Կարող եմ ասել, որ մօտ 20 երկրներից սփիւռքահայ ուսանողներ ունենք՝ Ամերիկայից, Եւրոպայի մի քանի երկրներից, Կանադայից, Լիբանանից, Եգիպտոսից, Ցորդանանից եւ Մրուքից, մանաւանդ հիմա, երբ Մրուքում տագնապալի վիճակ է տիրում:

- Յաջորդ հարցս կրկին վերաբերում է իրաւահայ եւ իրանցի ուսանողներին: Եղե՞լ են կրթական ծրագրերին կապւած ինչ որ խնդիրներ, օրինակ՝ բակալաւրատի համար դիմած իրանցի ուսանողները, ովքեր տուժել են պարսկական զպրոցում, կամ իրաւահայ զպրոցում կարողանո՞ւմ են մուտքի քննութեան առարկաներից բաւարար գնահատական, կամ՝ նոյնիսկ աւելի բարձր առաւել: Սիւս կողմից կրթական ծրագրերի տարբերութեան առումով երկու երկրների միջեւ առկա՞յ են ահիամաձայնութիւններ:

- Ինչքան որ ես գիտեմ՝ ոչ. յատուկ խնդիրներ չկան: Գիտէ՞ք, հիմա նոյնիսկ Հայաստանի զպրոցներն աւարտած շատ դիմորդներ էլ ունենք՝ «Շիրակացու ճեմարան»-ից, «Ալբ»-ից, «Ֆիզմաթ» զպրոցից, «Բաւանդ»-ից եւ հանրային տարբեր զպրոցներից: Ունենք նախապատրաստական դասընթացներ, որոնց միջոցով ուսանողները պատրաստւում են հանել պահանջւող մակարդակին:

Իհարկէ մենք թծախնդրութեամբ ենք ուսանող ընդունում: Պէտք է ասել, որ ամէն տարի մի քանի ուսանողներ կարւում են, թէ՛ հայաստանցի, եւ թէ՛ արտերկրից եկած: Մենք ընդունելութեան քննութիւններում այն յաջողած դիմորդներին ենք ընդունում, ովքեր կը կարողանան մեզ մօտ չարունակել իրենց ուսումը: Իրանի պարագային պէտք է աւելացնեմ, որ դեռ Իրանի կառավարութիւնը պատասխանչէ չի ճանաչում մեր համալսարանի վկայագիրը: Ներկայում բանակցում ու աշխատանք ենք տանում այդ խնդիրը լուծելու ուղղութեամբ եւ ես յոյսրս եմ այդ առումով:

- Հայաստանի Ամերիկեան համալսարանը լինելով վճարովի հաստատութիւն, ունի ընդունելութեան որոշակի սահմանափակ պայմաններ: Որքանո՞վ են դրանք կախւած ուսանողի վճարունակութենան կամ սփիւռքահայ լինելու հանգամանքից:

- Ճիշտ է, մեր թոշակները աւելի բարձր են տեղիս համալսարաններից, բայց միաժամանակ մեր համալսարանում ուսման թոշակը չա՛ս աւելի ցածր է, քան թէկ սահնք միւս Ամերիկեան համալսարանները, օրինակ՝ Բէյրութի կամ Կահիրէի:

Մեր թոշակները նչւած համալսարանների մէկ երրորդից էլ աւելի պակաս են: Հայաստանցի ուսանողից գանձւում է տուսւորապէս՝ 3000 դոլարի չուրջ: Արտերկրից եկած ուսանողների համար այդ գումարը կազմում է տարեկան չուրջ 7000 դոլար: Այժմ արտերկրից եկող սփիւռքահայ ուսանողները, հՀ 10 տարւայ ահաձայնից ունենալու դէպքում, համալսում են տեղաբնակ եւ կարող են տարեկան վճարել նոյն՝ 3000 դոլարը:

Երբեմն կարողանում ենք արտասահմանցի չատ լաւ տաղանդ ուսանողների մի փոքր զեղչ տալ: Մեր Հայաստանցի ուսանողների մօտ 50%-ը ուսումնական նպատա են տանում, որոնք կազմում են թոշակի 25%-ը, 50%-ը, կամ 75%-ը: Ուսանողներ կան, ովքեր սահնում են 90% զեղչ, այսինքն 300 դոլարի չուրջ մի գումար:

- Իսկ արտասահմանցիների, օրինակ Իրանից եկող ուսանողների համար չուեի՞ք այդպիսի ծրագիր:

- Եթէ սփիւռքահայ են եւ ստացել են՝ 10 տարւայ ահձնագիր, այդ դէպքում արդէն իրենք վճարում են միայն՝ 3000 դոլար ծախ: Եթէ հՀ քաղաքացիութիւն տուացած չլինեն, չեն կարող օգտւել այդ նպաստներից, բայց լաւ ուսանող լինելու դէպքում, ինչպէս նչւեց՝ Հնարաւոր է որոշ գումար զեղչել իրենց թոշակից:

- Ինչ որ աւելացնելու բան ունե՞ք այս զրոյցում ասելու, որը կարծում էք էական լինի «Ալիք»-ի ընթերցողների համար: Ի՞նչ խորհուրդ կը տար երիտասարդներին:

- Այո, նորից կրկնում եմ, որ մենք չատ ենք ցանկանում Իրանից ուսանողներ ունենալ, թէ՛ հայ եւ թէ՛ ոչ-հայ: Ես կարծում եմ մեր համալսարանում զրսից եկած ուսանողները չատ լաւ են ընկալւում: Տեղացի ուսանողները չատ լաւ են ընդունում նրանց: Ապահով չատ լաւ ընկերական եւ ուրախ ուսանողական շրջանակ կայ:

Զրոյցն ունենք ոչ մեծ հանրակացարան, մօտ 20 հոգու համար՝ մեր չէների մօտակայքում: Մի ուրիշ հանրակացարան ենք կառուցելու, որը կարծում եմ մէկուկէս-երկու տարուց պատրաստ կը լինի:

Հայերը եւ պարսիկները միմեանց մօտ ապրելու են եղել մշակոյթով, եւ պատեհ ունեցած պարսիկ ուսանողները յաջող են ուսանել:

Մեր նպատակն է նրանցի այլ ուսանողները Հայաստան այցելելիս ձող գան՝ այցելեն մեր համալսարանը: Թող ծնողներն էլ գան, մօտկից ծանոթանան ու որոշեն, թէ ինչ են ուզում անել:

- Շատ շնորհակալ եմ ջերմ զրոյցի համար պարոն Տէր-Կիւրեղեանճ:

- Խնդրեմ, ես էլ նմանապէս:

Հարցազրոյցը վարեց՝
ԱՐԱՄ ԽՈՒՆԱՆԼԱՐԻՆ
(Երեւան)

1- Accreditation
2- Western Association of Schools and Colleges (WASC)
3- Senior College and University Commission
4- Graduate Record Examination
5- Փոխառութիւնների
6- Վարչակիտութիւն

Աստւածածնի...
(Շար. 4-րդ էջից)

զաւանների:

Պրն. Մարտիրոսեանի բարի գալստեան խօսքից յետոյ Մրբազան Հայրը գողարիկ եւ սրտբաց զրոյց ունեցաւ ներկաների հետ, լսեց նրանց հարցերն ու մտահոգութիւնները եւ հայրաբար ու ամենայն անկեղծութեամբ պատասխանները ուեց՝ մխիթարելով ու զօտեւդելով նրանց: Թեմականի ատենապետ պրն. Կարապետեանն էլ իր հերթին իր շնորհակալութիւնն եւ երախտադիտութիւնն յայտնեց առաջնորդին եւ Աստւածածնի ծխի առաջնորդներ, ամփոփ կէտերի մէջ զեկուցեց թեմական խորհրդի աշխատանքների մասին, ինչպէս նաեւ խորհրդի պատրաստակամութիւնը յղացածները՝ օժանդակելու եւ օգտակար հանդիսանալու շրջանի ազգային կարիքներին:

Ապա, սրահում ներկաները Մրբազան Հօր եւ հիւրերի հետ միասին սիրոյ սեղանի շուրջ կիսեցին կէս օրուայ ճաշը: Շուրջ հինգ ժամ հանդիպումից յետոյ, Մրբազան Հայրը իր օրհնութիւնը ուեց ներկաներին եւ յիշատակի նկարն առնելուց յետոյ ուղուեց դէպի Գորգան, յաջորդ առաւօտն իսկ Ղօրհղի Ս. Աստւածածնայ Վերափոխման տօնի առիթով կատարելիք պատարագին մեծարոն նրանց տեսնելու յոյսով:

Գորգանի ճանապարհին Մրբազան Հայրը հակիրճ միաքերութիւն ուեց շրջնանում ապրող Մսկրատ Նազարեանին: Դրանից յետոյ չարունակեց ճանապարհը դէպի Գորգան, ուր քաղաքի մուտքին դիմաւորուեց տեղի հեկեղեցադպրոցական հոգաբարձութեան եւ այլ գործակիցների կողմից ու գիշերն էլ իր ընկերակիցներով, հիւրերով եւ ուխտաւորացութեան յատուկ երեկոյի խմբի անդամներով նրանց ընթրիքի հիւրը եղաւ:

Թւականիս ուրեմն, օգոստոսի 19-ի առաւօտեան մօտ 11-ին, Ղորղի գրասխանման պարտէզի մէջտեղում կատուցած Ս. Աստւածածնայ մատան մէջ տեղի ունեցաւ Ս. Աստւածածնայ Վերափոխման տօնի առիթով կազմակերպուած յատուկ պատարագը:

Պատարագը մատուցեց Թեմիս առաջնորդ Տ. Մեսրոպ սրբ. Մարգսեանը առրնթերակայութեամբ՝ Տ. Գուրգէն քհնյ. Ներսէսեանի եւ Տ. Արիստակէս քհնյ. Շահմիրեանի: Ուխտաւորները խոր երկիւղով ու հաւատքով մասնակցում էին պատարագին: Մրբազան Հայրն իր քարոզում խօսելով Աստւածամօր մասին եւ տոնի Աւետարանական հատւածից մեկնելով՝ անդրադարձաւ հոգե-մտաւոր արթնութեան եւ գիտակից վերազարթնման մասին, որովհետեւ «Մարդկութիւնը այնքան մեղքի տիրմում էր խրսած, այնքան Աստծուց էր հնռացած, որ չկարողացաւ ճանաչել Քրիստոսին, չկարողացաւ իմանալ թէ ծնող մանուկը դարերով սպասած ու ակնկալուած Մեսիան ու մարդկութեան փրկիչ-ազատարարն էր, որի մասին մարգարէները բազմիցս մարգարէաբանելով յայտնել էին»,- ասաց Մրբազան Հայրը: Եւ դարեր առաջ, երբ Աստւած փափաքեց ժամանակի մէջ մտնելով՝ մարդանալու իր առեղծուածների միջնէ բնակելի, գարմանալիօրէն ո՛չ միայն պահոդներում իրեն համար տեղ չգտնուեց: Ուստի Մրբազան Հայրը հրաւիրեց ներկաներին, որ չլինենք կարծաթախիտ ու Աստւածամէջ, ինչպէս էր պարագան երկու հազար տարի առաջ մեզասախուէների եւ աշխարհասիրութեան գոհ դարձած մարդկութեանը, այլ նա ասաց. «Վհինենք Մարիամ Ս. կոյս Աստւածածնի նման եւ հետեւենք իր օրինակին, որը սիրող, յարգանքի, համբերութեան, ծառայութեան, հաւատքի ու առաքինութեան մէջ ինքն իրեն գերազանցեց եւ ոչ միայն Աստւածորդին իր արգանդում ինն ամիսներ կրելու չնորհքին ու պատւին արժանացաւ, այլեւ իր գրկում սեղմեց Նրան եւ իր շրթներով էլ համբուրեց Աննմանութիւնին: Նա ասաց. «Այսօր, սիրելիներ նկէք մենք էլ մեր կարգին խոնարհեցնենք մեր աչեները Աստծու առջեւ եւ բացելով մեր սրտերը, հաւատքի զօրութեամբ ընդունենք եւ մեր մեղքէն տագարներում ընկալենք Քրիստոս Աստւածը եւ աստւածային ու երկնային օրհնութիւններով կենսաւորւած՝ օրհնութիւն եւ բարիք դառնանք իր՛ մեր հարազատներին եւ իր՛ մեր շրջապատին»: Նա իր քարոզի վերջում, Հայեց Աստծուց, որ Աստւածամայրը լինի մեր բոլորի բարեխօսն ու հովանաւորը, որպէսզի մենք էլ զարգարենք նրա կեանքը յատկանշող առաքինութիւններով եւ կարողանանք իրրեւ արժանաւոր զաւակները մեր եկեղեցու՝ վայելել ու փորձարկել այդ բոլորը: Նա նաեւ իր գնահատանքն ու շնորհաւորութիւնները փոխանցեց թէ՛ ուխտաւոր ներկաներին, թէ՛ շրջանի հայ զաւակներին, եւ թէ՛ Մարիի ու Գորգանի եկեղեցա-զպրոցական հոգաբարձութեան անդամներին, իրենց սիրոյ, յարգանքի, ընդունելութեան եւ համագործակցութեան համար:

Պատարագի աւարտին, պարտէզի մէկ բաժնում Մրբազան Հայրը ուխտաւորների ներկայութեամբ կատարեց աւանդական խաղողի օրհնութիւնը, որը չատ գեղեցիկ տպաւորութիւն թողեց ներկաների վրայ, որովհետեւ մի պահ բոլորի մաքում պատկերեց անցեալի, գարեր առաջ կատարւած խաղողի օրհնութեան եղանակը, երբ մեր նախնիները այն կատարում էին եկեղեցիներից դուրս, այդ կատաններում, երբ թաֆօր կազմած՝ հանդիսաւորապէս ուղուում էին դէպի տպիներ՝ պտուղ կատարելով խաղողօրհնութիւնը:

Ընդհանուր պատրոնութիւնից յետոյ սրահում Մրբազան Հայրը հանդիպեց շրջնանի եւ մօտակայ այլ քաղաքներից եկած հայրոցիների: Նա իր հայրական յորդորների ատրներ, նաեւ ուսուցողական գիտելիքներ փոխանցեց եւ աւարտին էլ նրանց հետ կէսօրեայ ճաշի հիւրը եղաւ, որը մատուցւեց տեղի եկեղեցա-զպրոցական հոգաբարձութեան կողմից ի պատիւ Մրբազան Հօրն ու իր ընկերակիցների, օրւայ ատենի ուրախ եւ բարեխառնի ատիճով: Օրւայ ատիճով յանուն հոգաբարձութեան՝ բարեգասեցաճ ջնաքն արտասանեց՝ Վազգէն Բեզալեանը:

Ճաշից յետոյ Մրբազան Հայրը հանդիպեց նաեւ Թէհրանից մասնաւորապէս ուխտաւորների հետ, եւ նրանց հետ էլ մտերմիկ զրոյց ունեցաւ, եւ աւարտին յիշատակի նկարից յետոյ հրաժեշտ տալով վերադարձաւ Թէհրան: Յանապարհին Մրբազան Հայրը այցելեց նաեւ. Գորգանի եկեղեցա-զպրոցական հոգաբարձութեան անհանգստ Հայկազ Զուլաքանին, որը արկածի բերումով չէր կարողացել մասնակցել ուխտաւորութեանը եւ արարողութիւններին:

Ֆր. Հ. Ֆր. Կրօնական խորհուրդ

«ՓՐԻՆ ՓԷՅՏ ԻՐԱՆ»

VIP հանրակառքերով նոր սպասարկութիւններ՝ Թեհրան - Երեւան եւ Երեւան - Թեհրան ուղեւորներին:

Տաք կերակուր

Հատավաճառ տոմսերով կամ «Չարթըր» եղանակով:

Հեռ. 44632007-8

Գիտի պեմա իրան

شروع سرویس های جدید
با اتوبوس های VIP
با ارائه غذای گرم

● تهران - میدان آزادی، ترمینال غرب
۸ - ۴۴۶۳۲۰۰۷

● دفتر نارمک ۷۷۲۶۳۰۰۶

● ایروان - میدان جمهوری (هراپاراک) - جنب هتل اربونی
۰۰۳۷۴ (۱۰) ۵۲۹۲۲۰

تهران - ایروان و بالعکس به صورت انفرادی و چارتر